«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-437-30.12.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. Նախագծի 1-ին հոդվածի վերնագրից և հոդվածից հանել «արդարացնելը կամ» բառերը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նախագծով առաջարկվում է քրեականացնել Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-րդ, 301-րդ, 385-րդ, 397.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները:

Նախագիծը չի սահմանում, թե ինչ է բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը, բացակայում է հանցագործության արտաքին դրսևորումների բնութագիրը:

Պայմանավորված օբյեկտիվ կողմի բացակայությամբ և դրանով իսկ իրավական որոշակիության սկզբունքի հետ խնդրահարույց լինելով՝առաջարկում ենք նախագծի վերնագրից և հոդվածից հանել «արդարացնելը» բառերը: